

Եզրափակելով վերև գրուածներն՝ կարելի է ասել թէ՛ Եկեղեցական ճարտարապետութիւնն վերածուած է հիթանոսաց քաղաքական Բազիլիկայէն. այս վերածումն կամ յարմարեցումն (adaptation) Եկեղեցւոյ արարողութեանց, կատարուած է յաջորդութեամբ Արեւելքում Գ զարէն սկսած. Արեւելեան եկեղեցիներու մակարդակների վրայ տեսնուում է ամէն տիպի խաչի ձեւակերպութիւն, նաեւ այնպիսիք կերպրուական Սիրիոյ մէջ, որոց տրանսէպտն (transsept) անկի երկար է քան Առեանի լայնութիւնն, լատին տի T տառի ձեւով: «Արեւմտեան Տիպ» այլապէս «Լատին խաչ» կոչուած ձեւն ոչ նոր ինչ է և ոչ առանձնակ ռժմ մը, ոչ մասնաւոր անկի խորհրդական նշանակութիւն ունի քան զհաւասար թեւերով խաչը: Եկեղեցիների բաժանումէն յետոյ առաջինն եղաւ Երարդիկ Եկեղեցւոյ ստակոնիշն, միւսն Օրթոդոքս Եկեղեցւոյ: Հայաստանեայց եկեղեցիներն պատկերացնում են ամէն տիպի գեղեցիկ նմուշներ և առանձին խաչի ձեւ որ կոչուում է Հայկական:

Հ. Գ. ՆԱԱԳՈՍԵՏՈՍ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍԿԱՔԱՂ

Քսէի Է ԴԻՔԻՆՔԻՆՔԻ ԴԻՔԻՆՔԻՆՔԻ ԱՆԻՐԻՔԻՆՔԻ

(Շար. տես Բազմ. 1927 էջ 283)

Զ. — Ղուկ. ԺԱ. 41.

«Բայց աղէ՛ գարծանն իսկ տուը ողորմութիւն»: Արեւմտեան զրուած է բնագրի Τὰ ἐνόντα ի համապատասխան, բայց ոչ մէկ այլ թարգմանութիւն մերիւնին կը ծայնակցի: Ասորբերէնն ունի՝ տակորդը, մնացորդը, ինչպէս Vulg. «quod superest». Եթովպ. հարկատր եղածը, գուցէ քիչ մը հայերէնին մօտենայ: Յայտնի է որ ԲՆՆագրի Τὰ ἐνόντα ալ շատ որոշ չէ. սակայն մեկնիչները միշտ տակորդի, մնացորդի իմաստ սը կը հասկնան. իսկ բառական կերպով՝ մէկն եղածները (օրինակ. սնակին են.) կամ եղածները, գոյքը, բառացուածքը՝:

Է. — Ղուկ. ԺԱ. 52.

«Զի բարոցսներ զփականս գիտութեան», Յոյն բնագիրն և Vulg. ունին՝ տակը, տակականցիք = իրաւ = tulistis, մինչ Ասոր. և Եթովպ. անկի մերիւնին համաձայն են զնեղով՝ վերցուցիք, տակը (մէջտեղէն): Միւր թարգմանութիւնը հաւանորէն կախում ունեցած է Wescott - Hort ի hr = lectio occidentalis կոչած ընթերցումէն, ուր փոխանակ իրաւ = tulistis = տակը՝ զրուած է ἐκρούφατε բարոցսներ՝:

Ը. — Ղուկ. ԺԱ. 53.

Այս հետեւորդ համարն ալ հայերէնի մէջ նշանակելի տարբերութիւն մ'ունի բնագրին. «Եւ ի խոսելն նորա զայս աւանայն՝ զամօրի հարկանէին: Եւ սկսան զպիրքն և փարիսեցիք զչարել և զզոռել ընդ նմա վասն բազում իրաց և սպասել են...»: Vulg. «Cum autem haec ad illos diceret, coeperunt pharisaei etc... Բնագիրը սակայն երկու գլխաւոր ընթերցում ունի ըստ զանազան և հին ձեռագիրներու: Հին և հեղինակաւոր դասակարգ մը TBCՔ (Թիւրքոզորֆի տպ. և վատիկանեան, Եփրեմեան, Սինէական ձեռագիրները) համաձայն և պարզ ձեւ մը ունին «Καὶ ἐπὶ ἐξελθόντος αὐτοῦ ἤρξαντο (= Եւ ապա յեւանելն նորա, սկսան դպ. և փար. են.) ուր զամօրի հարկանէին ձեւը չկայ ամենեւին՝: Միւս ընթերցումը զոր Wescott - Hort արեւմտեան կը կոչեն՝ մեզի հետաքրքրական է. «Λεγοντες δε αὐτοῦ ταῦτα πρὸς αὐτοὺς ἐνοπίον παντός του λαοῦ ἤρξαντο οἱ φαρισαῖοι καὶ οἱ νομικοὶ δεινὼς ἔχειν (գուցէ ἐνεχεῖν ինչպէս այլուր) καὶ συνβάλλειν αὐτῷ περὶ πλεονῶν, (54) ζήτουσιντες ἀφορίσιν τινα λαβεῖν αὐτοῦ ἵνα εὐρωσιν κατηγορησάιν αὐτοῦ (αὐτοῦ)»: Այս ընթերցումածին ա մասը բոլորովին համաձայն է, մինչ Vulg. չունի՝ ἐνοπίον παντός του λαοῦ՝: Սակայն մնացածին մէջ ալ չ'երեւիր մեր զամօրի հարկանէինը, և ոչ

1. S. Vigouroux, Ն. Ի. էջ 819.

2. Nestle, N. T. Լ. Ե. էջ 185a.

3. Vigouroux տեղ. էջ 920.

4. Nestle տեղ.

ալ ընթերցուածին կը համաձայնի. վասն զի նախ հոս փոխանակ դպիրքի օրինականք = νομιμοί է. (ընդհանուր ձեւը սա- կայն դպիրքն է). յետոյ կը պակսի 54 համարի « որսալ ինչ բանս ի բերանոյ նորա »:

Nestle յոյն բնագրին մէջ՝ որ վա- տիկանեան—Եփրեմեան—Սինէական խում- րին կը վերաբերի՝ կը պակսի 54 համարի վերջաւորութիւնը «զի չարախօսեացն ըզ- նմանէ». սակայն Vulg. և միւս խումբերն ունին:

Այս զոյգ համարներու բնագրի զանա- զան խումբերու ընթերցուածներուն, ինչ- պէս և բոլոր թարգմանութեանց մէջ կը պակսի զամօրի հարկանքինը. կարելի ալ չէ համազօր ընդունիլ յոյն δεινως ενεχειν = Vulg. graviter insistere՝ որ յա- ջորդ համարին կը վերաբերի և որուն հանդէպ մեր թարգմանութիւնն ունի «ըզ- չարեւ և զրգռել»:

Թ. — Ղուկ. ԺԲ. 2.

«Զօրոյ լերուք անձանց ի խմորոյ սա- դովեցոցն»: Յոյնն և Vulg. փարիսեցոցն ունին: ՄԿ. Ը. 15ի մէջ սակայն հայն համաձայն է այլոց՝ զնեղով փարիսեցոց, իսկ Թէ հոս հայերէնին մէջ ինչպէս փարի- սեցոցը՝ սադովեցոցի փոխուած է, կը մեկնուի Մատթէոսի ԺԵ, 6էն ուր փա- րիսեցոց և սադովեցոց է. Նման փոխ- առութիւններ, շփոթութիւններ շատ ու շատ են, ինչպէս մէկ երկու օրինակ ալ վարը պիտի տեսնենք:

Ժ. — Ղուկ. ԺԲ. 4.

«Բայց ձեզ ասեմ սիրեկեաց իմոց»: Զարմանալի է որ չորս աւետարաններու բոլոր փառք = amicus և բարեկամ թարգ- մանելով, այս համարին մէջ միայն սի- րեկեաց զրուած է. բոլոր թարգմանութիւն- ները միշտ բարեկամ ունին փառքի դիմաց:

ԺԱ. — Ղուկ. ԺԳ. 35.

«Թէ ոչ տեսանիցէք (տեսանէք) զիս մինչեւ ասիցէք»: Այս համարին մէջ կը

պակսի կարեւոր մաս մը զոր ունին Յոյնն և Vulg. οὐ μὴ ἴδητέ με ἕως ἥξει ὅτε εἰπῇτε = quia non videbitis me do- nec veniat cum dicetis, որով պիտի ըլլար. «Թէ ոչ տեսանիցէք զիս մինչեւ եկեաց յորժամ ասիցէք»: Բայց Ասորի և Եթովպ. թարգմանութիւնները մերինին նման են բոլորովին. միայն յաջորդ «Օրհ- նեալ եկեալ յանուն Տեսառն»ի մէջ փոքր տարբերութիւններ ունին. երկուքն ալ 'Ο ἐρχόμενος = qui venit ի համաձայն ներ- կայ ժամանակ կը դնեն. Որ ցայ. բաց աստի եթովպականը փոխանակ Օրհնեալի՝ երսնեալ է:

ԺԲ. — Ղուկ. ԺԳ. 8.

«Երբժամ կոչիցէ որ զքեզ ի հարսանիս կամ ի կոյտեան»: Բնագիրն ունի միայն εἰς γάμους և Vulg. ad nuptias. մեր «ի կոչուէս» աւելադրութիւնը չեմ գիտեր ուսկից է. Ընդհակառակն Ասորին՝ միայն ի կոյտեան ունի առանց ի հարսանիսի. աւ- դին Եթովպ. ալ պարզապէս ի ձաջ՝ ա- ռանց կոչուելի և հարսանիքի:

ԺԳ. — Ղուկ. ԺԳ. 12.

«Մի՛ կոչեր... և մի՛ զդրացիս քո և մի՛ զմեծամեծս»: Հոս կարեւոր ուղղելիք մը կայ. բնագիրը ունի μηδὲ γειτόνας πλουσίους = և մի՛ զդրացիս մեծատունս (կամ մեծա- մեծս). Vulg. ալ բնագրին կը համաձայ- նի. ինչպէս նաեւ Ասոր. Եթովպ. և այլ թարգմանութիւններ. և ամբողջ իմաստն ալ կրնանք գուշակել որ մեծամեծք հարկ է ածական մ'ըլլայ զդրացին որակող, ապա Թէ ոչ Յիսուսի խօսքին նպատակը կը թիւրի. այսինքն նա կ'ուզէ որ կոչ- նատէրն տղքատ ու բշտատ մարդիկն հրա- չիրէ. և կարծեմ ամէն դրացի՝ աղքատ համարելու նշան մը չկայ, որովհետեւ հարուստ դրացիներ ալ կան և սակայն անոնք զուրս պէտք է հանուին հրաւի- բալներու թուէն. որով բնական ձեւ կու գայ ըսել. «և ոչ ալ հարուստ դրացիները»:

Մեր սխալ թարգմանութեան միւս ալ պաշտպան է Սերասեան օրինակը որ յայտ-

նապէս կը դնէ (Nec) vicinos neque divites¹. Ինչ որ չիմ կարծեր թէ կախման կամ յարաբերութեան հետեւանքով է, որչափ անուշադրութեան սխալ երկուսն ընէ ըսին ալ:

ԺԴ. — Ղուկ. ԺԴ. 15.

«Իրանի որ կերիցէ ձաշ յարգայութեան նշն Ստուծոյ», Բնագիրն և բոլոր թարգմանութիւնները³ անխտիր կը դնեն $\alpha\rho\tau\omicron\nu = panem =$ հաց. միայն մերն է ձաշ: Բնական է իմաստի բնաւ տարբերութիւն չկայ. սակայն նշանակելի է անոր համար միայն՝ որ միւս բոլոր վկայութեանց մէջ՝ Մտթ. ԺԵ. 2, ՄԵԿ. Գ. 20, Է. 2, 3, Ղուկ. ԺԴ. 1, Յովհ. Գ. 31, Գործք. ԻԷ. 35, Ա. Կորնթ. Ե. 11, անխտիր հաց դրուած է նիւթապէս $\alpha\rho\tau\omicron\varsigma = panis$ ի հանդէպ. Ինչպէս նաեւ անխտիր և նիւթապէս ձաշ դրուած է՝ $\alpha\rho\iota\sigma\tau\omicron\varsigma = prandium$ ի դիմաց, Ինչպէս Մտթ. ԻԲ. 4, Ղուկ. Է. 36, ԺԱ. 37, ԺԲ. 12—15. Նոյնպէս հաւատարմորէն ԺԴ. 12 «Երբ ժամ ատնիցես ձաշ կամ ընթրիս = $\alpha\rho\iota\sigma\tau\omicron\nu$ քի $\delta\epsilon\iota\pi\omicron\nu = prandium$ vel $coenam$. Ինչպէս և ընթրիս = $\delta\epsilon\iota\pi\omicron\nu = coenam$ (ԺԴ. 16): Այսքան նիւթական հաւատարմութեան և նմանութեան ընդ է որ զարմանալի կը դառնայ բացառաբար եւ զած այդ միակ շեղումը ձաշ՝ փոխանակ հացի:

ԺԵ. — Ղուկ. ԺԵ. 45.

«Այսպէս հանել զաղանեկաւանսն և ըզգնողս, և զսեղանս հատալմանաւանցն զքրուսեաց»: Այս համարը բնագրի ընդունուած ընդհանրական ձեւին չի համաձայնիր, վասն զի ընդգծեալներն հոն կը պակսին. $\eta\rho\epsilon\alpha\tau\omicron\nu \epsilon\chi\theta\acute{\alpha}\lambda\lambda\epsilon\iota\nu \tau\omicron\upsilon\varsigma \pi\omega\lambda\omicron\upsilon\sigma\tau\alpha\varsigma$ ($\epsilon\nu \alpha\upsilon\tau\omicron\varphi$) $\kappa\alpha\iota \alpha\gamma\omicron\rho\acute{\alpha}\zeta\omicron\nu\tau\alpha\varsigma$. Ուրեմն բնագրին մէջ պարզապէս զվաճառողս և զգնողս է: Ասորին և Vulg. ալ միայն ունին «զայնոսիկ որ գնէին և վաճառէին», «ven-

dentes (in illo) et ementes», Եթովպ. սակայն ունի. «Երուեաց զսեղանս հատաւաճառացն և զաթոռս աշոցիկ որ զաղանեան վաճառէին»: Մեր և Եթովպ. թարգմանութեան կը համաձայնին Աղեքսանդրեան և ուրիշ քանի մը օրինակներ ալ². սակայն յայտնի է որ ատիկա ընդհանուր ընդունուած ձեւը չէ, այլ պարզ փոխառութիւն մը Մտթ. ԻԱ. 12էն. «... և եհան արտաքս զամենեւին որ վաճառէին և գնէին ի տաճարի անդ. և ըզսեղանս հատաւաճառացն կործանեաց և զաթոռս աղանեկաւանացն». ուր ամբողջական է պատկերը իր բոլոր մանրամասնութիւններով, պատշաճապէս լրբացնելու համապատասխան թերի համարը՝ երբ օրինակողը կամ այլ ոք յանդնութիւնը կ'ունենայ բնագրին ձեռք զարնել:

ԺԶ. — Ղուկ. ԻԲ. 47.

«Իրեւ մերձեցաւ առ Յիսուս՝ համբուրեաց զնա. քանզի զայն նշան տուեալ էր նոցա, թէ ընդ որում ես համբուրեցիցեմ է, զնա ուրիշք»: Բնագիրը պարզապէս ունի. $\kappa\alpha\iota \eta\gamma\gamma\iota\varsigma\epsilon\iota \tau\omicron\varphi \text{ } \text{I}\epsilon\sigma\omicron\upsilon\varsigma \varphi\iota\lambda\eta\tau\omicron\iota\varsigma \alpha\upsilon\tau\omicron\nu = et appropinquavit Jesu ut oscularetur eum =$ (Եւ մերձեցաւ) մտնեալ առ Յիսուս համբուրել զնա): Սակայն Ասորին և Եթովպ.՝ հակառակ բնագրին և Vulg.ի մեր թարգմանութեան կը համաձայնին նոյն ընդգծուած պարբերութեամբ, թեթեւ տարբերութիւններով միայն:

Հոս ալ անշուշտ յաւելումը կամ փոխառութիւնը Մտթ.էն է. տե՛ս ԻԶ. 48: Այս և նման յաւելումներն ու շփոթ փոխառութիւնները, Ինչպէս ըսինք, շատ են. անոնց զոյութիւնը կը բացատրուի զանազան կերպով. երբեմն յիշողութեան ապակիներով, երբեմն տգիտութեամբ և ծիծաղելի խղճահարութեամբ՝ իրեւ պակաս մը լրացնելու մտքով. երբեմն զիտաստօրէն, երբեմն ալ՝ մոռացութեամբ

1. Nestle, տե՛ք. էջ 194.

2. S⁶us Brianus Waltonus S. T. D.ի բազմակէզ-

ուսան տպ. Լիստոն 1657.

3. Brianus W.ի տպ.

թողուած համարելով. հուսկ լուսանցքի վրայ դրուած համեմատութիւններէն՝ որոնք բնագրի մէջ կ'անցնին խղճամիտ օրինաւորողներու կողմէն, և այսպէս կրնայ եղած ըլլալ օր. վերն յիշած կոչումներ հարսաւորելն վրայ աւելնալով. ևն.:

Այս ոճով երբեմն անփնաս յաւելումներ, սակայն անգամ ալ իմաստի փոփոխութիւններ և սխալներ տեղի կ'ունենան. ինչպէս օր. ծանօթ Սղմ. Գ. 9 «Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեսցուք և զարթիցուք» ի հանդէպ բնագիրը բոլորովին տարբեր է. զարթիցուք ի հանդէպ ունինք ὕπνωσας = ի թուն եղէց, հսկեցեայ ինչպէս ունին Եթեանասինցն և բոլոր թարգմանութիւններն առանց բացառութեան:

Հաւանօրէն փոփոխութիւնը տեղի ունեցած է շփոթութեամբ Սղմ. Գ. 57 տան հետ որ վերինին նման է. «Ես ննջեցի և ի քուն եղէ, զարթեայ» ևն.:

ԺԷ. — Ղուկ. ԻԳ. 18.

«...Գեօղ մի, որ հեռի էր յերուսաղեմէ հարիւր և վարսուն ասպարիսաւ, և էր անուն նորա Եմամաուս»: Թոյն բնագիրն, Ասոր., Եթովպ. և Vulg. և ընդհանրապէս միւս թարգմանութիւնները վարսուն ասպարէզ միայն հեռու կը դնեն և ոչ 160. յոյն սակաւ ձեռագիրներ ունին ἑκατὸν ἑξήκοντα = 160, սակայն ընդունուած է այդ ընթերցումը (lectio reiecta notabilis)¹:

Ոմանք կ'առարկեն թէ այդքան հեռու չէ, և թէ 160 ասպարէզը դիւրին չէ կրտբել այդքան շուտ մէկ օրուան մէջ:

Եսիւ ըսենք որ Στάδιον = ասպարէզը որոշ չափ մը չէ և տեղւոյ և տեղւոյ մէջ բաւական կը տարբերի. այնու հանդերձ՝ հոսովմէականն հաշուելով, որ ասպարէզներու մեծագոյնն է, այսինքն 185 մեղր,


պիտի ունենանք առ առաւելն 30 հազարամեղր, հազիւ կէս օրուան ճամբայ. իսկ հեռաւորութեան մասին՝ եթէ ընդունինք որ Եմամաուս նոյն է Նիկոպոլի հետ՝ որ հիմա Ամուաս (Amwas) կը կոչուի՝ ըստիպուած ենք բնագրի 60ը 160ի փոխել մեր հայ թարգմանութեան համեմատ. այսպէս կը համարին Tischendorf, Knaubenbauer, Zorell². Ուրիշ հեղինակներ սակայն Եմամաուս Գոլոնիէ կամ Գուպէյպէյի հետ կը նոյնացնեն³. Հայ ձեռագիր՝ մը միայն՝ փոխանակ 160ի՝ 150 կը դնէ, յայտնի է վերապակաւ:

(Շարումակիթ)

Հ. ԵՐԱ ՓԵՏԵՍԵԱՆ

ԵՐԵՉ, ԵՐՁԵԿԱՅ ԵՒ ԱՆԱՅՏԱԿԱՆ

ԿԱՍ ԵԿԵՂԵԱՅ ԳԱՒԱՌՈՒ ԱՆՈՒՆԸ



ԱՐԱՅԻՆ անգամ Երզնկայի կը հանդիպին իբր «Երեզ աւան» «Գիդե Երեզայ» Ազաթանգեղոսի մօտ. յետոյ նաեւ, Երեզ ձեւով, Մովսէս Խորենացիի թով⁴. Գաւառին ալ տրուած է Եկեղեց Գաւառ անունը: Հաստիվերտցիի մօտ որոշ Եկեղեցեաց ձեւով գրուած է: Եւ սակայն եկեղեցիներ ունենալէ առաջ, նախ քան քրիստոնէութիւն, Երեզ գոյութիւն ունէր և գաւառիս անուն մը կը տրուէր: Տիգրան Բ. հոս շինեց փարթեմ մեհեան մը իր պապուն՝ Արտաշէսի՝ Հելլադայէն բերած մեծահամբաւ Անահիտի համար, և զաւառս ալ նուիրուելով Դիցունիին՝ կոչուեցաւ Անահայ Գաւառ⁵. «Մեհեանիս համբաւը այնչափ մեծ էր որ Գ. Կասիոս և Պլինիոս չէին քաշուիր Եկեղեցեաց գաւառը պարզապէս ի ἀνακτορες χωρα կամ ըստ Պլինիոսի Anaitica Regio կոչել⁶», «Ի հետեւ Անահիտի նշանաւոր» Երզնկան⁷, Անահ-

1. Nestle, անդ. էջ 226.

2. N. i T. i lexicon etc. էջ 180.

3. S. v. Vigouroux անդ, էջ 889 - 891.

4. S. v. Քուրապեան առ.

5. Մովսէս Խորենացի Տգ. վերնորդ 1837, էջ 189.

6. Հ. Ղ. Աւերան. Հին Հաւատք Հայոց էջ 282.

7. Դիւ. Հ. Ա. Մատթեան-Արա Գեղեցիկ-Հանդէս Ամօրեայ, 1923, էջ 123.

8. Կիրակոս Ս. Ղազանճեան. Խառն Դամական, 1887, էջ 7.